

որ բարկութիւնը իրմէ հանէ. բայց ինչ մեծ կըդլայ զարմանքն ու խնդութիւնը երբ անոր բերնին մէջ կըգտնէ երկանը գրապանակը : Սաստիկ ուրախութենէն կըբռնէ կըպազնէ հաւատարիմ ու օգտակար շնիկը, եւ այնունետեւ սիրով կըդոգայ ու կըդարմանէ զայն :

---

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ.

— Գայլախազ քարերնիս իրարու նետ շփենք որպէս զի կայծ հանեն, բայց Աստուծոյ սիրոյն համար ըլլայ՝ իրարու գլուխ չնետենք :

— Կեանքն ալ ծովու ջրոյն պէս դեպ ի երկինք ելլելով միայն կանուշնայ :

— Ամեն մեկ աստղ իր լուսոյն նետ սրտիս մէջ յուսոյ շառաւիդ մը կիշեցընէ :

— Թէ որ շատախօսք մեզի ծածուկ բան մը կրպատմեն այն պայմանաւ որ ուրիշին ջրսենք, պատճառն այն է որ իրենք միայն կուզեն ամենուն իմացընել :

— Բարեկամութիւնն որ աշխարհիս վրայ գտնուած ամեն բանէ սակաւագիւտ ու քաղցր է, որ աստուածոց կըգոնէն մարդիկ : — Անձնասիրութեան, շահասիրութեան :

— Առջի բարեգործութիւններդ կըջնջես թէ որ նոգչտանիսաւնոնքերկրորդ եւ երրորդ բարեգործութեամբք չնորոգել : Հարիւր անգամ բարիք ըրէ տուր, մեկ անգամ մի տար ու մերժէ, այն մերժումը միտք կըմնայ, մեկանոնք բոլոր կըմոցուին :

— Ամօրխածութիւնն ու ցողը շուրք կըսիրեն. երկուքն ալ երկրիս լոյսը տեսնելուն պէս երկինք կըվերանան :

— Ռէջափ որ իմաստնոյն գիտութիւնը շատնայ, այնչափ ալ իր վրայ ունեցած վստահութիւնը կըպակսի նման արեգական որ նրջափ բարձրանայ՝ այնչափ ալ շուրքը կըքիչնայ :

— Բարբարոսի մը անցած ժամանակ աւազի վրայ ձգած ոսքին նշանը տեսնելով կըհաւատայ անաստուածը թէ աշխարհիս վրայ կայ անիկայ, եւ չուզեր հաւատայ թէ Աստուած կայ որուն ձեռքը բոլոր տիեզերաց վրայ դրոշմուած է :

— Կուզեկի ժայոփի նման ըլլայ որուն արմատները ծովուն մէջ կըտարածուին, գագարը երկինքը կընայի ու ոչ երբէք կըտատանի :

— Կուզեկի այն բոցնեկին նմանիլ, որ միւղին վրայ կեցած՝ անոյշ հովեն կորորայ, արեւուն կենաստու ճառագայքները վրան կըզարնեն, եւ երգերուն ձայնը անդադար կապտագոյն երկինքը կըրոջին կեցին :

— Վեհ ոգիք միայն կընաւկընան թէ նրջափ փառք ու պատիւ և մարդուս բարի ու բարերար ըլլալ :

— Ստով մը յանցանք գոցելը անոր կընմանի որ մեկը բիծն հանեմ ըսելով տեղը խոշոր ծակ մը բանայ :

— Լուակնաց անմիտ մարդիկ բանալեօք կղպած պարապ դարաններու կընմանին :

---

### ՕՐԵՆՔ ԸՆԴԴԵՄ ԱՐԲԵՑՈՒԹԵԱԾ.

Շուետի երկրին մէջ երբոր մեկը գինովնայ ու դուրսը հասարակաց տեղ մը գտնուի, առաջին անգամուն 15 ֆրանք տուգանք կուտայ. երկրորդ անգամուն 30 ֆրանք. իսկ երրորդ ու չորրորդ անգամուն պատիժներն աւելի խիստ են. ոչ միայն աւելի տտակ կուտայ, այլ նաև հասարակաց ընտրութիւններուն մէջ քուէ ձգելու եւ ընտրուելու կարողութիւնը կըկորսընցընէ, ու գինովնութեանը յաջորդ կիրակին իր բաղի եկեղեցւոյն դրան առջեւը ցցի մք կապուած կըկենայ : Հինգերորդ անգամուն զգաստութեան տուն մը կըդրուի ու վեց ամիս չարաշար կաշխատի : Վեցերորդ անգամուն բանտ կերրայ :

Գինովութեան յորդորողն ալ 15 ֆրանք տուգանք ունի. եւ թէ որ գինովցուցածը չափանասչէ՝ տուգանքը կըկին կըլլայ :

Գինով եկեղեցականէն պատարագելու իշխանութիւնը կառնեն. տէրութեան պաշտօնի մէջ գտնուող աշխարհականն ալ պաշտօնէն կըձգուի :

Ոչ երբէք մեկը գինովութեանը պատճառաւ կընայ ըրած յանցանքին արդարանալ :

Գինովութեամբ մեռած մարդը հասարակաց գերեզմատունը չքաղուիր :

### ԱՇԽԱՏ ԵՐԿՐԻ.

Երկիրս կըկշուկ:

6,700000,000000,000000,000000 հազարկրամ կամ

4,460250,000000,000000,000000 քաշ (օգգա) :